# Բ Ն ՈՒ Թ Ա Գ Ի Ր

ԵՊՀ-ի Հնագիտության և ազգագրության ամբիոնին կից հնագիտության գիտահետազոտական լաբորատորիայի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, ավագ գիտաշխատող ԳՐԻԳՈՐ ԵՎԳԵՆԻԻ ԱՐԵՇՅԱՆԻ, ծնվ. 1949 թ., հայ, ՍՄԿԿ անդամ

Գրիգոր Եվգենիի Արեշյանը 1970 թվականից աշխատում է ԵՊՀ-ում, ավարտել է ասպիրանտուրա, պաշտպանել թեկնածուական դիսերտացիա և, աշխատելով հայագիտական հետազոտությունների պրոբլեմային լաբորատորիայում իսկ այնուհետև՝ հնագիտության գիտահետազոտական լաբորատորիայում աստիճանաբար զբաղեցրել է տարբեր՝ սկսած ավագ լաբորանտից մինչև լաբորատորիայի վարիչի պաշտոնները։ 1986 թ. ապրիլին նա մրցույթով ընտրվել է ԵՊՀ-ի հնագիտության և ազգագրության ամբիոնին կից հնագիտության գիտահետազոտական լաբորատորիայի վարիչի պաշտոնում։

1981-1985 թթ. ընթացքում Գ.Ե.Արեշյանը հրատարակել է 32 գիտական աշխատություն, մասնակցել է միջազգային երկու, միութենական չորս և հանրապետական վեց գիտական նստաշրջանների, սիմպոզիումների ու կոնգրեսների աշխատանքներին։ Այդ ժամանակաշրջանում նա առաջադրել է գիտական լուրջ նշանակություն ունեցող երկու հիպոթեզներ, առաջինը՝ նվիրված հնագիտական աղբյուրներում էթնիկական փոփոխությունների արտացոլման օրինաչափություններին, երկրորդը՝ հնդեվրոպական դիցաբանության հնագիտական վերակազմության վերաբերյալ։ Գ.Ե.Արեշյանը լավատեղյակ է ժամանակակից գիտության նորագույն նվաճումներին և կատարում է իր հետազոտությունները միջազգային գիտական պահանջներին համապատասխան։ Նրա կողմից ղեկավարվող հնագիտական արշավախմբերը կատարել են մի քանի կարևոր հայտնագործություններ։

Գ.Ե.Արեշյանի ղեկավարությամբ աշխատող հնագիտության գիտահետազոտական լաբորատորիան ձեռք է բերել ակնհայտ հաջողություններ։ Նրա ջանքերով ստեղծվել է երիտասարդ մասնագետների գործարար մի կոլեկտիվ,

որտեղ աշխատանքային առողջ մթնոլորտ է տիրում։

Հնագիտության և ազգագրության ամբիոնին կից հնագիտության գիտահետազոտական լաբորատորիան և պատմության ֆակուլտետի կոլեկտիվը միջնորդում են ատեստացիոն հանձնաժողովին Գ.Ե.Արեշյանին ատեստավորելու լաբորատորիայի վարիչի պաշտոնում և սահմանելու նրան ամսական 450 ռուբլի աշխատավարձ։

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆ Մ.Լ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ Ս.Ա. ԵՍԱՅԱՆ

ԿՈՒՍԲՅՈՒՐՈՅԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա.Գ. ՉԱՐԲԻՆՅԱՆ

ԱՐՀԲՅՈՒՐՈՅԻ ՆԱԽԱԳԱՀ Ի.Գ. ՂԱՐԻԲՅԱՆ